

վոր մարդոց հատուկ կենդանի և շարժիչ ուժի մը կերպարանքը ստացած: Պիտի ուղիղ, որ մեր հայրենիքի վարիչները և աշխարհի բոլոր դիվանագետները տհանեին մեր ժողովուրդին ցուցադրած այս զգացումները. պիտի ուղիղ, որ թյուրքերն իսկ հասկնաշին զայն, որպեսզի ըմբռնեին, թե ի՞նչ տեղ կդրավե հայրենիքը մեր կյանքին մեջ: Մեր գոյության իմաստն է ու միակ նպատակը՝ մեր կյանքին: Մենք չենք կըրնար ապրիլ այլևս առանց հայրենիքի: Կը-

բաշկուտենք մեր օրերը, անոր հասնելու համար. թերթիք կկարդանք, դիվանագետներու գործունեության հիետեկինք սրտաարոփ, մեր մեկնումի օրուան սպասելով աշնդիտ: Ա: կհավատանք, որ պիտի տրվի մնջի այս անգամ մեր հայրենիքը. կհավատանք այլևս շթաղել մեր մարմինը օտար հողերու տակ. կհավատանք ապրիլ ու մեռնիլ մեր երկնքի արևին ու աստղերուն տակ:

ԼԵՎՈՆ ԶՈՐՄԻՍՅԱՆ
(«Արևմուտք» թիվ 34 1945 թ. Փարիզ)

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ս

ՏՈՒՆԴԱՐՁ

Եր մոտենա՞մ... ահա՝ դռներդ կը բացուին, մ'րժան դիզված կարու ունիմ սրտի մեջ, Պիտ արտասում ես հուզումես ցնձագին Այն վարկյանին երբ աշխեր տեսնեն Ինզ:

Պիտ հեռանամ այս անձանոք ափերեն, Մոռ է ժամը անվերադարձ մեկնումիս, Խ-նչան ուժեղ է պատկերդ լուսեղեն, Ուր կը գերե հայրենաբաղձ իմ հոգիս:

Կը մոտենա՞մ... ո՞վ սիրակխն հայրենին, իմ պապերուս և մամերուս սրբավայր, Եվ կը ճայիմ ես հեռուսն գեղեցիկ Հովհաններուդ և դաշտերուդ ակաղանուն, Ուր հայ տղան և հայ աղջիկը սիրուն Անպարտելի ցեղիս նոր երգը կերգեն:

Պիտ հեռանամ այլուրի իայս ափերեն Զանը հույսիս միշտ պինդ բռնած ափիս մեջ Եվ պիտի զամ ո՞վ հայրենին, ծնրադիր Քու խորանիդ առջ վառել զայն, անմար Զանիդ լույսեն, և սրտիս խոր ու մրին Անկյուններն ու խորշեր երդենեւ:

Կը մոտենա՞մ... ահա՝ դռներդ կը բացուին, Բազում դիզուած անմեռ կրակ սրտի մեջ. Պիտ արտասում ես հուզումես խոլաբար Այն վարկյանին երբ աշխեր տեսնեն Ինզ:

ՀՈՎՍԵՓ ԹՀԿԸՐԺԱՆ

ԽԱՐԹՈՒՄ (ՍՈՒԴԱՆ)

(«Արակս», հունվար 26 1946 թ.)

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ն Զ Ա Յ Ն Ը

Սիյուռքի հայության ականջին ոչ մեկ ձայն այնքան անուշ կինչե, որքան մայր հայրենիքի ձայնը, որ սկսած է հնչել: Մեր բաղցր հայրենիքը, մայր Հայաստանը: դարավոր գերութենե և ստրկութենե հենաւու, հաշողեցավ փշրել իր շղթաները և վերածնի առույք ու կայտառ, ավելի քան երբեք: Մեր հայրենիքը այսօր ո՞չ թշվառ է և ոչ ալ անտեր, ինչպես որ վարժված էինք երկար տարիներե ի վեր երգել. — «Մեր հայրենիքը, թշվառ անտեր», Այս՝ էր երբեմն, բայց այսօր անցած են թշվառության և անտերության տարիները: Այսօր վերջ գտած է թշշվառությունը՝ շնորհիվ հայ քաջակորով բազուկներու կատարած նվաճումներուն: Այսօր անտեր չէ մեր հայրենիքը՝ շնորհիվ սովետ ժողովուրդներու եղբայրակցության և քաջամարտիկ հայ զորականներուն:

Այս հայրենիքն է, որ այսօր հրավեր ուղ-

ղած է իր տարագիր զավակներուն՝ վերադառնալու իր ծոցը և լծվելու վերաշինության գործին, ինչ որ ամեն հայու սրբազն պարտականությունն է: Հայրենամիքուրությունը լոկ զգացում մը չէ. ճշմարիտ հայրենասիրությունը պետք է գործնական ըլլա և կամ գործով պետք է հաստատվի, ապա թե ոչ ան կմնա զգացում և խոսք, ինչ որ ոչ միևնու կրերե հայրենիքին:

Ուրեմն ժամանակը եկած է երգելու. —

«Իմ Հայրենիքը զիս կը կանչի,

Հեռու եմ Հայաստաննեն,

Հայու որդույն կը վայելե՞»

Հեռու մնալ Հայաստաննեն»:

Ու հայու որդույն չի վայելեր Հայաստաննեն հեռու մնալ և բաշքել թափառական հայու անստույգ և անորոշ կյանքը: Հայու որդույն կվայելի ընդունիլ հայրենիքին հը-

րավերը և վերադառնալ անոր ծոցը, իրավամբ նպաստելու համար անոր վերելքին ու վերաշինության գործին:

Հայրենիքը պետք ունի աշխատող բաղուկներու Սփյուռքի հայությունն ալ տղատվելու համար միանգամ ընդմիշտ թափառական կյանքի, պետք ունի որոշ և հաստատու կոռուանի մը, հաստատելու համար իր բուկնը, իր ընտանիքը: Այդ հաստատու կոռուանը միմիշայն հայրենիքը կրնա ըլլար: Ուրիշ ամեն երկրի մեջ օտար է ան, ինչ որ ալ ըլլան քաղաքական տիրող պայմանները:

Ուստի, երբ սկսին արձանագրությունները, ամեն հայ ռշարտի արձանագրի առաջին առթիվ: Ասիկա ստիպողական բան մը չէ, առ առթիվ մըն է անոնց, որ կիսափարին հայրենիք երթալ ու հոն հաստատվի: Ասիկա բարոյական պարտականություն մըն է:

- Շատեր կվախնան երթաւե, այն մտահոգությունով, որ անծանոթ են տեղվույն պայմաններուն: Ինչ որ ալ ըլլան այդ պայմանները, մեր ներկա պայմաններեն լավ ըլլալու են: Այցելեցեք Անդրնահրի դաղթակայնները, մտեք Սանճագ, Թիրո և ուրիշ քեմքերը, և պիտի համոզվիք որ ատկե ավելի գեշ վիճակ չկրնար ըլլալ: ոչ ալ անոնցմե ավելի հին ու խարխու հրուղակներ կարելի է երևակայել: Հայաստանի ընծայելիք պայմանները ինչ որ ալ ըլլան, Անդրնահրի պայմաններն շատ ավելի լավ ըլլալու են:

Ներգաղթողներուն կսպասեն հետևյալ աշումիւթյունները.—

1. Հայրենի հողը, ուր իրենց զավակները կրնան հաստատվի, առանց ուժանալու և կորուելու վախին:

2. Բնակարան մը, որ Անդրնահրի տուննե-

րեն ավելի լավ պայմաններ պիտի ունենա և առաջն ալ բանջարանոց մը:

3. Գործ և գրաղում ըստ յուրաքանչյուրին կարողության և կարիքին: Անգործության վախ չի կա հոն: Իսկ հոս հայուն մեծադուռքությունն է այդ:

4. Ջրի ուառում ամեն հայու որդվույն. ընդունակներուն ալ բարձրագույն ուսում՝ ծրի ըլլալու պայմանավ:

5. Բժշկական և առողջապահական լավագույն պայմաններ:

6. Հանգստի և վայելքի դրություններ, որոնցմե զորկ ենք հոս:

7. Ապահովություն՝ ծերության և հիվանդության դեմ, և այն:

Այս բանները արդեն բավականաշափ խըթան մըն են հայրենիք երթալու Սփյուռքի հայությունը այս հիշված բաներեն զորկ է և զորկ պիտի մնա միշտ սփյուռքի մեջ:

Շատեր ալ կառարկեն թե ներգաղթ կարելի չէ, եթե նոր հողեր չկցվին Հայաստանի, որովհետև ներկա Հայաստանը փոքր է և ի վիճակի չէ նոր բնակիչներ ընդունելու: Սըխալ է այս կարծիքը: Ներկա Հայաստանը կրնա իր ներկա բնակչության գեթ կրկինը ապրեցնել, չըսելու համար ավելին: Մնաց որ ներգաղթի հրավերը պատրաստող Հայաստանի վարիչները կարծենք թե այդ առարկողներուն շափ խելք ունին: Եթե Հայաստանն ի վիճակի ըրլար նոր բնակչություն ապրեցնելու, անոնք պիտի շարունակներ ներգաղթը:

Արդ, առանց ականջ զնելու հաճախ դիտումնավոր զրուցներու, պատրաստվինք արձանագրվելու պաղարյուն և հանդարտ մտքով: Մինչ այդ ամեն մարդ պարտի իր գործով զբաղեցնելու:

Հ. ԱԱՐԴԻՍՅԱՆ

(«Առաջարկ» հունվ. 25 1946 թ. Պեյրով)

Դ Ե Պ Ի Հ Ա Յ Ա Ն Ի Ք

Դո՞ւ կենսապարար մեր Հայրենիք, երբ այսօր մեզ կկանչես՝ միթե կարելի է ապրել առանց քեզ, նույնիսկ մեր մեջը. երբ մեր ակնարկները կարուտակեզ քեզ էրն ուղղված քառորդ դար, որ կյանք մը ըստի է: Եվ այսօր երբ մեր աշքերուն առջև սրփուած է քու քաջարի զավակներուդ գործերը զարդարուն, ու շանքերը պտղալի, որոնք մեր հոգիները հապատությամբ և մեր սրտերը ցնծությամբ կլեցնեն: Միթե կարելի է այս ապրիլ առանց քեզ երրեւք: Մեր

միտքը՝ համակ մեր էությունը նետահար թուզունի մը նման թեր բացած վարկլան առաջ գիրկդ նետվիլ կուզե: Թող ամպերն ու խավարը մշուզով ծածկել ուզեն մեր ճամրան, բայց երբեք քալլերնիս պիտի չհապաղին: Խավարը չի կրնար խռովել մեր հոգիները, զի քաջ գիտենք թե խավարը քեզմե հեռի, քեզմե զորկ մնալն է ու գիշերը՝ քեզի մոռնալն է, մեր լույս հայրենիք.

Եվ այսօր, այս օտար աստղերուն ներքեա տակավին պլայացող մեր կյանքը ինչ որ